

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
33

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
33

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

33

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Օ. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

«Բանբեր Մատենադարանի» 33, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. երևան, 2022: 536 էջ (ներդիր 16 էջ):

Հ 33/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2022:

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմությունը, բանասիրությունը, արվեստին և բնագիտությանը նվիրված հոդվածներ, երիտասարդական 7-րդ գիտաժողովի (2021 թ. նոյեմբերի 25-27) նյութեր, հրապարակումներ և մի հաղորդում:

**ՎԱՀԱՆ ԵՎ ՍՄԲԱՏ ԴԱԴՅԱՆՑՆԵՐԻ
ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՇՈՒՇԻՈՒՄ 1880-ԱԿԱՆ ԹԹ.**

Բանալի բառեր՝ Ղարաբաղի հայոց թեմ, թեմական հոգևոր դպրոց, Շուշի, Դադյանց եղբայրներ, տպարան, գրահրատարակչություն, գրաքննություն:

Շուշիում տպագրությունն սկիզբ է առել 1828 թ., որի նախադրյալը եղավ Շվեյցարիայի Բագել քաղաքի Ավետարանական քարոզչական ընկերության գործունեությունը տարածաշրջանում¹: 1837 թ. հիշյալ քարոզիչներին Շուշիում ծավալած գործունեության ամբողջական դադարից հետո Ղարաբաղի թեմի առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանցը գնում է այդ տպարանը², որը տպագրական սարքավորումների համալրմամբ և արդիականացմամբ, վայրիվերումներով ու դադարներով գործել է մինչև 20-րդ դարասկիզբը³ անուրանալի դերակատարություն ունենալով Արցախի կրթամշակութային կյանքի վրա: Այդ ընթացքում Շուշիում հրատարակված գրքերի անվանաթերթերի վրա նշյալ տպարանը հիշատակվում է տարբեր անվանումներով՝ «՚ի տպարանի Բարձր Սրբազան Մետրապոլիտն Վիճակին Ղարաբաղու Տեառն Բաղտասարայ», «՚ի տպարանին Շուշույ ընծայեցելոյ Մայր Աթոռոյն Սրբոյ էջմիածնի ՚ի հանգուցեալ Բարձր Սրբազան Մետրապոլիտ Բաղտասար Արք եպիսկոպոսէն Հասան-Ջալալեանց», «՚ի տպարանի Սրբոյ էջմիածնի ՚ի Շուշի», «՚ի տպարանի ընծայեցելոյ յազնուական Յօհաննիսէ Ստեփանեան Յովնանեանց նոյն դպրոցին», «՚ի տպարանի Հոգևոր դպրոցին հայոց Ղարաբաղու», «Տպարան Հայոց Հոգևոր տեսչութեան»:

Տարբեր տարիներին այս տպարանի ձեռք բերած հաջողությունները սեր-

* ԳԱԱ Պատմության ինստիտուտ, հայցորդ, st.petoyan@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ փետրվարի 1, 2022, գրախոսելու օրը՝ մայիսի 2, 2022:

1 Ս. Պետոյան, «Բագելյան բողոքական ֆարզիչների՝ Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1827-1835 թթ.)», *Հայագիտության հարցեր*, Երևան, 2021, № 1, էջ 45-65:

2 Ս. Պետոյան, «Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանցը և Շուշիի հայկական տպագրությունը», Մաս Ա., *էջմիածին*, 2021, Յուլիս (Է.), էջ 88-102, Ս. Պետոյան, «Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանցը և Շուշիի հայկական տպագրությունը», Մաս Բ., *էջմիածին*, 2021, Սեպտեմբեր (Թ.), էջ 78-94:

3 ՎԱԱ, ֆ. 12, ց. 7, մ. 2, գ. 3140, ք. 10 և շրջ.:

տորեն առնչվում էին ազգային, հոգևոր, մշակութային և հասարակական գործիչների հետ, որոնցից էին նաև Վահան և Սմբատ Դադյանցները: 19-րդ դարի 80-ականներին Շուշիում նրանց ծավալած կրթամշակութային և հատկապես գրահրատարակչական գործունեությունը՝ կապված հիշյալ տպարանի պատմության հետ, արժանի է հատուկ ուշադրության: Փորձել ենք նաև վերհանել Դադյանց եղբայրներին վերաբերող անհայտ էջերը: Նշենք, որ 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին հատկապես աչքի էր ընկնում Վահան Դադյանցը՝ որպես թանկարժեք ձեռագրերի ու հազվագյուտ առարկաների հավաքորդ և գիտնական-ուսումնասիրող, ազգային գործիչ, ով հետագայում առավել հայտնի էր իր եկեղեցական անվամբ՝ որպես Խաչիկ ծայրագույն վարդապետ Դադյանց:

Նախ անդրադառնանք Շուշիում գրահրատարակչական գործին առհասարակ: Այսպես, 1874-1877 թթ. Շուշիում գործող տպարան չկար: 1874 թ. Խորեն վարդապետ Ստեփանեի խմբագրությամբ Շուշիում տպագրված առաջին պարբերականի՝ «Հայկական աշխարհ» ամսագրի մի քանի համարների հրատարակումից հետո Դարաբաղի թեմական հոգևոր դպրոցի տպարանն արդեն մատնվել էր անգործության⁴: Բավական է միայն հիշատակել 1876 թ. մայիսի 15-ին Կովկասի գրաքննական կոմիտեից հայտնած տեղեկությունն այն մասին, որ Իվան Բարուլշևի նախաձեռնությամբ «Кавказский листок объявленый» պարբերականի հրատարակությունը կոմիտեն չէր թույլատրել տպագրել: Բանն այն է, որ Ի. Բարուլշևը, մշտապես ապրելով Շուշիում, ցանկանում էր իր պարբերականը հրատարակել Թիֆլիսում՝ տեղի խոշոր տպագրիչներ «էնֆիաճեանցների» տպարանում, քանի որ այդ պահին, ինչպես նշեցինք, Շուշիում որևէ գործող տպարան չկար: Սակայն կոմիտեն Ի. Բարուլշևի խնդրանքի անհնարինությունը համար բերել էր մի քանի պատճառաբանություն, որոնցից մեկի համաձայն՝ Շուշիում մշտապես ապրող քաղաքացին Ռուսական կայսրության օրենքների պահանջով չէր կարող այլ քաղաքում պարբերական հրատարակել⁵:

1877 թ. նոյեմբերի 18-ին հայ բողոքականներ Մահտեսի-Հակոբյանցներին Շուշիում թույլատրվեց հիմնել նոր տպարան⁶: Այնտեղ նրանց ծավալած գրահրատարակչական գործունեությունը դժկամորեն ընդունվեց⁷: Մինչև անգամ տեղեկություններ էին շրջանառվում այն մասին, որ լինելով այդ ժամանակ Շուշիում գործող միակ տպարանը՝ այն գերշահույթ էր ապահովում տպարանատերեր Մահտեսի-Հակոբյանցներին: Այդ հանգամանքը նպաստեց, որ Շուշիի հա-

⁴ ԱԵ, Պատմութիւն Դարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի 1838-1913, Թիֆլիս, 1914, էջ 429-430:

⁵ ՎԱՍ, ֆ. 480, ց. 1, գ. 234, ք. 2:

⁶ ՎԱՍ, ֆ. 480, ց. 1, գ. 849, ք. 13 շրջ.:

⁷ Ս. Պետոյան, «Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը (1877-1905 թթ.)», Բանբեր հայագիտության, Երևան, 2021, № 2 (26), էջ 107-128:

սարակույթյունը քայլեր ձեռնարկեր՝ վերականգնանցներու հոգևոր դպրոցի տպարանը, ինչի համար շուշեցիները հավաքագրեցին 2505 ուրբլի գումար, իսկ դպրոցի հոգաբարձույթյունն իր միջոցներից հատկացրեց 1047 ուրբլի 78 կոպեկ (ընդամենը՝ 3552 ուրբլի 78 կոպեկ): Այդ գումարով Մոսկվայից գնվեցին հայերեն ու ռուսերեն տպագրական տառեր, արագատիպ տպագրական մեքենա և տպագրական այլ պարագաներ, որոնց համար ծախսվեց 3078 ուրբլի: «Փոքր և շատ համեստ» տպարանը 1886 թ. սկսում է իր գործունեությունը՝ նախորդ տպարանից պահպանելով միայն անունը⁸:

Հարկ է նշել, որ լինելով Բաղդասար մետրոպոլիտի տպարանի իրավահաջորդը՝ Շուշիի այս տպարանի վերագործարկման թույլտվության համար պատկան մարմիններին դիմելու անհրաժեշտություն չկար, քանի որ նման թույլատվություն նախապես ստացվել էր դեռևս 1840 թվին⁹:

Տարածաշրջանում արագատիպ տպագրական մեքենաների հայտնվելը մեծացրեց մրցակցությունը և նոր հնարավորություններ ընձեռեց տպագրական գործի ծավալման համար՝ այն վերածելով առավել շահութաբեր գործունեության: Ժամանակակից և մրցունակ լինելու համար արևելահայ տպարաններն իրենց հրատարակությունների վրա հաճախ մատնանշում էին «արագատիպ տպարան» ունենալու հանգամանք¹⁰: Ինչպես տեսանք, դրանք առկա էին նաև Շուշիում գործող Մահտեսի-Հակոբյանցների և Թեմական հոգևոր դպրոցի վերաբացված տպարաններում:

1886 թվականից հետո գրեթե երկու տասնամյակ Շուշիի այս երկու տպարանները գտնվում էին մրցակցության մեջ՝ ծավալելով գրահրատարակչական լայն գործունեություն: Թեմական հոգևոր դպրոցի վերագործարկված տպարանի հրատարակչական և տպագրական գործի զարգացմանը մեծապես նպաստեց հայ բողոքականներ Մահտեսի-Հակոբյանցներին ստվերում թողնելու միտումը: Նշենք, որ մինչ 1886 թվականը հիշյալ տպարանն իր գործունեության նախորդ տասնամյակներում տպագրում էր կրոնաեկեղեցական գրքեր և դասագրքեր, չնայած որ այն ընկալվում էր որպես միայն կրոնական բնույթի գրքեր տպագրող

⁸ Հաշիւ Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր դպրանոցի հոգաբարձութեան 1889-1890 ուսումնական տարուայ համար, կազմեց հոգաբարձութեան անդամ Ա. Բաբախանեան [Աէօ], Շուշի, 1890, էջ 17, Բանուր, «Տպագրական գործը Շուշիում», Ղարաբաղ, Շուշի, 9 օգոստոս, 1912, № 58, էջ 2, Աէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգևոր դպրոցի 1838-1913, էջ 429:

⁹ Ս. Պետոյան, «Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը և Շուշիի հայկական տպագրությունը», Մաս Բ., էջ միածին, 2021, Սեպտեմբեր (Թ.), էջ 80-81:

¹⁰ 20-րդ դարակազմի նման հիշատակությունների հանդիպում ենք, օրինակ, Ալեխանդրապոլի «Սանդեանի և Ստեփանեանի», «Շիրակ», «Յովհ. Ափինեանի», «Ա. Մալխասեանցի», Ախալպլախի «Մ. Գրիգորեանի», Կարսի «Շ. Կ. Սուրենեանի» և այլ տպարաններում լույս տեսած հրատարակություններում:

հաստատություն¹¹: Լեոյի հիշատակմամբ՝ արդեն 1888-1893 թթ. տպարանի շուրջը կենտրոնացել էր գրական մի նոր շարժում թարգմանական և գեղարվեստական գրականության ասպարեզում¹²:

Շուշիում վերագործարկված տպարանին կից գրավաճառանոց բացելու համար գործուն քայլեր ձեռնարկվեցին: Նպատակը ոչ միայն մրցակցելն էր Մահտեսի-Հակոբյանցների գրավաճառանոցի հետ, որը 1876 թ. հունիսի 7-ին ստացել էր Շուշիում գործելու թույլտվություն, այլև այդ միջոցով տպարանի համար որոշակի շահույթ ապահովելը: Պետք է նշել, որ Շուշիում 1885 թ. հուլիսի 25-ին ոմն շուշեցի Առնոդ Ասրյանին (Геворд Асруев) թույլատրվել էր գրավաճառանոց բացել¹³, որը Մահտեսի-Հակոբյանցների գրավաճառանոցից հետո Շուշիում պետք է լիներ թվով երկրորդը: 1886 թ. հուլիս 17-ին Արաբաղի կոնսիստորիան իր հերթին դիմել էր Ելիզավետպոլի նահանգապետին՝ խնդրելով թույլատրել թեմական հոգևոր դպրոցի տպարանին կից նույն թվականի օգոստոսի 1-ից բացել գրավաճառանոց՝ կոնսիստորիայի անմիջական հսկողությունամբ: Գրություն մեջ հատկապես շեշտադրվում էր, որ բացվելիք գրավաճառանոցն զբաղվելու էր տարբեր դասագրքերի վաճառքով: Հետաքրքրական է, որ այս հարցի առնչությամբ Կովկասի գրաքննական կոմիտեն Ելիզավետպոլի նահանգապետին հայտնում էր, որ թույլտվության համար նախընտրելի է իմանալ նաև էջմիածնի Սինոդի կարծիքը¹⁴:

Շուշիի վերաբացված տպարանի անդրանիկ հրատարակությունները հիմնականում գեղարվեստական փոքրածավալ գրքույկներ են: 1886 թ. հրատարակված մեզ հայտնի չորս անուն գրքույկներից երեքը ռուսերենից թարգմանություններ են¹⁵, իսկ չորրորդը շուշեցի մի վաղամեռիկ երիտասարդի կենսագրականն է¹⁶, որի բնագրի վերջում մի շատ գեղեցիկ զարդանախշի մեջ տպագրված է հետևյալ գրառումը. «Գրաշար և Տպագրիչ Ա. Ադամեանց 1886 թ. Շուշի»:

Կարճ հիշատակարանի նմանվող այս գրառումը հուշում է, որ 1886 թ. Շուշիի վերաբացված տպարանի գրաշարն ու տպագրիչը նույն անձնավորությունն էր:

Պետք է նշել, որ այդ չորս գրքույկներից երկուսի վրա տեղ գտած «հրատարակություն Աւետիք Պապեանցի» հիշատակությունից հասկանալի է դառնում, որ տպարանն ընդունում էր պատվերներ՝ այդպիսի շահույթ ապահովելով և

¹¹ «Նամակ Շուշուց», *Մշակ*, Թիֆլիս, 8 (20) ապրիլ, 1878, № 57, էջ 1, ԱԾ, Հայ գրքի տօնը, Թիֆլիս, 1912, էջ 170, ԱԾ, Անցյալից (հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, 1925, էջ 32:

¹² ԱԾ, Պատմություն Արաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի 1838-1913, էջ 430:

¹³ ՎԱԱ, ֆ. 480, ց. 1, գ. 849, ք. 14:

¹⁴ ՎԱԱ, ֆ. 480, ց. 1, գ. 785, ք. 1-3:

¹⁵ «Բարեբաղնիքն այսպես պէտք է եւ Ջոն-Տեմներ» և «Սիրոյ գոշումն» (թարգմ.՝ Պետրոս Տեր-Յովհաննիսեանց), «Փայլուն բզեզ» (թարգմ.՝ Միխայել Գանգեցեանց):

¹⁶ «Չնաշխարհիկ տղայ» (կենսագրեց՝ Մակար վրդ. Բարխուտարեանց):

միևնույն ժամանակ հեռու մնալով ինքնուրույն հրատարակչական աշխատանքներից: Ա. Պապյանցի հրատարակած երկու գրքերի վերջում զետեղված հիշատակութունից տեղեկանում ենք, որ դրանք կարելի էր ձեռք բերել ոչ միայն հրատարակչի և թարգմանչի մոտից, այլև տպարանին կից գրավաճառանոցից:

Լեոյի վկայությամբ, տպարանի վերաբացումն ուրախություն պատճառեց «ժողովրդի հասկացող դասակարգին»: Առաջին տարում տպարանն աշխատեցնում էր թեմական հոգևոր դպրոցի հոգաբարձությունը, իսկ երկրորդ տարում թեմի հոգևոր կառավարությունը երեք տարի ժամկետով տպարանը վարձակալության հանձնեց մասնավոր անձանց¹⁷: Ստացվում է, որ տպարանը մինչ այդ չէր կարողացել ապահովել նախատեսված շահույթը, իսկ այն վարձակալությամբ տալու նախադեպը գալիս էր դեռևս նախորդ տասնամյակներից: Մասնավորապես հայտնի է, որ 1862 թ. այն վարձակալությամբ հանձնվել էր տպագրիչ Մինաս Տառլիիճյանցին¹⁸: Մյուս կողմից էլ, ինչպես 1890 թ. կազմած «Հաշիւ Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր դպրանոցի հոգաբարձութեան 1889-1890 ուսումնական տարուայ» հաշվետվության, այնպես էլ 1914 թ. տպագրված «Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի 1838-1913» մեծածավալ աշխատության մեջ Լեոն չի նշում, թե հատկապես ովքե՛ր էին այդ տարիներին տպարանի վարձակալները:

Ուսումնասիրության ընթացքում պարզեցինք, որ տպարանը վարձակալությամբ էր տրվել Վահան և Սմբատ Դադյանցներին, որոնք Տեր Գրիգոր քահանա Դադյանցի որդիներն էին: Նրանցից առաջինը՝ Վահանը (ծնվ. 1863 թ.) 1881 թ. օգոստոսի 18-ին ավարտել է Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցը՝ ստանալով «յոյժ գովելի մրցանակագիր»¹⁹: Իբրև ուսուցիչ՝ դասավանդել է մի շարք դպրոցներում, այդ թվում՝ Շուշիի Ս. Հռիփսիմյանց կուսանաց դպրոցում, որի պատասխանատուն էր ինքը²⁰: 1885 թ. ելիզավետպոլի նահանգապետի հրամանով փակվեցին Շուշիի գավառի հայկական բոլոր հոգևոր դպրոցները, այդ թվում՝ Ս. Հռիփսիմյանց կուսանաց դպրոցը²¹: Կորցնելով աշխատանքը՝ Վ. Դադյանցը նախ փորձում է Շուշիում մասնավոր ուսումնարան բացել, որի համար դիմում է

¹⁷ Հաշիւ Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր դպրանոցի հոգաբարձութեան 1889-1890 ուսումնական տարուայ համար, 1890, էջ 17:

¹⁸ ԱԾ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի 1838-1913, էջ 303:

¹⁹ ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 45, ք. 3: Վահան Դադյանցն աշակերտական տարիներին աչքի էր ընկնում իր հնարամտությամբ և շուտ կողմնորոշվելու հատկությամբ, որոնք ուղեկցել են իրեն ողջ կյանքի ընթացքում (տե՛ս Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմական դպրանոցի 75-ամեակը, Շուշի, 1913, էջ 66):

²⁰ Մ. Ավետիսյան, «Ազգային մշակույթի նվիրյալը», Շողակն Արարատյան, 2012, № 2 (281), էջ 4:

²¹ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 167, ք. 3 և շրջ.:

պատկան մարմիններին, սակայն մերժում է ստանում²²: Այա իր եղբոր՝ Սմբատի հետ նախաձեռնում է Շուշիում հիմնել իրենց կազմատունը: Բանն այն է, որ նրանց քահանա հայրը բավական հմուտ է եղել կազմարարական գործում, որը սովորեցրել է նաև իր որդիներին²³: Ուշագրավ է, որ Լեոն 1885 թ. օգոստոս 22-ին Շուշիից գրում է, որ Տեր Գրիգոր քահանան իր որդիներ Վահան և Սմբատ Դադյանցներին ժառանգություն է թողել երեք տասնյակից ավել հին ձեռագրերի մի հարուստ հավաքածու, որը նրանք խնամքով պահում էին իրենց մոտ՝ ապագայում Սուրբ Էջմիածնի թանգարանին նվիրելու մտադրությամբ²⁴:

Արդեն իսկ նույն տարվա նոյեմբերի 10-ին Վ. Դադյանցը դիմում է Ելիզավետպոլի նահանգապետի գրասենյակ՝ Շուշիում կազմատուն բացելու խնդրանքով²⁵: Մեկ ամիս անց՝ դեկտեմբերի 10-ին, Ելիզավետպոլի նահանգապետի գրասենյակից ստանում է վկայական, որով Վահան և Սմբատ Դադյանցներին թույլատրվում էր Շուշի քաղաքում բացել կազմատուն: Դրա բացման օրվա և օրենքով սահմանված գործունեության պատասխանատու անձի մասին նրանք անհապաղ պետք է տեղեկացնեին Ելիզավետպոլի նահանգապետի գրասենյակին²⁶: Վ. Դադյանցը պատասխանում է, որ իրենք կազմատունը բացելու են 1886

²² ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 167, ք. 4-6:

²³ Վահան և Սմբատ Դադյանց եղբայրներից բացի՝ մեզ հայտնի են նաև մյուս եղբայրներ՝ Հայկը, Արամը և Երեմիան: Վերջինս, 1889 թ. կիսատ թողնելով Ղարաբաղի հոգևոր դպրոցի ուսումը, ձգտում էր հմտանալ տպագրական և կազմարարական գործում, քանի որ կազմարարությունը սովորել էր իր հորից և եղբորից (տե՛ս ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 301, ք. 1 և շրջ.): Հետաքրքրական է, որ 1912 թ. Երեմիան Երևանի նահանգապետից ստացել էր վկայական՝ Էջմիածնում կազմատուն բացելու վերաբերյալ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 307, ք. 1): 1895 թ. մի վավերագրից տեղեկանում ենք, որ Հայկը նույնպես թողել էր Ղարաբաղի հոգևոր դպրոցը և տեղափոխվել Էջմիածին՝ Խաչիկ վրդ. Դադյանցի մոտ, որի ցանկությունն էր, որ Հայկն ուսումը շարունակեր Էջմիածնի Գևորգյան նեմարանում: Նա հետաքրքրված էր նաև լուսանկարչական և տպագրական գործով, ուստի ձգտում էր սովորել լուսանկարչություն, որպեսզի դրանով կարողանար Խաչիկ վարդապետին օգնել հնագիտական ժողովածուի լույս ընծայման աշխատանքներում, ինչպես նաև նպաստել հայկական հնավայրերի գտածոների ուսումնասիրմանն ու հանրահռչակմանը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 301, ք. 2 և շրջ.): Իսկ Արամը 1914 թ. Եվրոպայում զբաղված էր հայկական թանկարժեք ձեռագրերի վաճառքով (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1032, ք. 6 և շրջ., ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1031, ք. 1):

²⁴ Ա. Բաբախանյան, «Մի քանի հնոսիրուններ», *Արձագանք*, 1 սեպտեմբերի, 1885, № 9, էջեր 121, 123: Փաստորեն, ձեռագրերի նկատմամբ Վահան Դադյանցի հետաքրքրությունը գալիս էր իր հորից: Վ. Դադյանցն իր կյանքի մեծ մասն անցկացրել է Ղարաբաղի և տարածաշրջանի տարբեր վայրերից հավաքված արժեքավոր ձեռագրերի, վավերագրերի և թանգարանային առարկաների հավաքչական աշխատանքով՝ դրանք փրկելով կորստից (տե՛ս **Յակոբ Յ. Թօփեհան**, *Յուզյակ ձեռագրաց Դարեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898*, Մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ Ը.):

²⁵ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 167, ք. 13:

²⁶ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 300, ք. 1:

Թվականի հունվարի 1-ին²⁷: Կազմատան պատասխանատու անձը կրկին Վ. Դադյանցն էր, ով եղբայրներից ամենաճարպիկն էր և տիրապետում էր օտար լեզուների (պաշտոնական գրագրությունը ռուսերեն): Կովկասի գրաքննական կոմիտեի փաստաթղթերում էլ որպես կազմատան բացման թույլտվության ամսաթիվ դարձյալ նշված է 1885 թ. դեկտեմբերի 10-ը²⁸:

Մեր ձեռքի տակ ունենք 19-րդ դարի վերջերին Այսրկովկասի գրահրատարակչական գործունեությունն առնչվող հաշվետվությունների վավերագրեր, որոնցում որևէ տեղեկության չենք հանդիպում, որ 1886 թ. դրությամբ կազմատներ են գործել հայաշատ քաղաքներ Գանձակում, Բաքվում, Երևանում, Ալեքսանդրապոլում և Շամախիում: Ստացվում է, որ Շուշիում Դադյանցների հիմնած կազմատունը տարածաշրջանում ունեցել է բացառիկ կարևորություն, ինչը փաստում է, որ նրանք շատ լավ են գիտակցել իրենց կազմատան հեռանկարները: Հայտնի է, որ կազմարարությունը բավական բարդ, աշխատատար և ժամանակատար գործ է, որը ոչ միայն կարիք ունի հմուտ վարպետների, այլև պահանջում է ֆինանսական հավելյալ միջոցներ: Անցյալում կազմատները հաճախ եղել են առանձին կառույցներ, որոնք ծառայություններ են մատուցել տպագրիչներին: Այս շրջանում կազմատունը նաև ծառայում էր գրքերի վերանորոգման (վերականգնման) համար: Շուշիի գրահրատարակչական պատմությունն ուսումնասիրելիս որևէ փաստի չենք հանդիպում այն մասին, որ Դադյանցներից առաջ գոյություն ուներ մեկ այլ կազմատուն: Իսկ բողոքական քարոզիչների գրահրատարակչական գործունեությունից սկսած՝ կազմարարությունը կատարվում էր հենց տպարանում:

Դադյանցները չեն սահմանափակվել միայն կազմատնով, և 1886 թ. նոյեմբերի 22-ին Ելիզավետպոլի նահանգապետի գրասենյակից ստացել են օրենքով սահմանված թույլտվություն՝ իրենց կազմատանը վաճառելու գրաքննված գրքերը²⁹: Ստացվում է, որ Դադյանցների բացած գրավաճառանոցը Շուշիում թվով չորրորդն էր: Փաստորեն, Դադյանցները Շուշիում լայնածավալ գրահրատարակչական գործունեություն իրականացնելու համար հաջորդիվ պետք է ունենային տպարան, ինչը կապված էր մեծ գումարների հետ: Չունենալով ֆինանսական լայն հնարավորություն՝ նրանք կարողացան վարձակալել թեմական հոգևոր դպրոցի արագատիպ տպարանը: Վերջինիս վարձակալության վերաբերյալ պահպանվել են դրա պայմանագրի ռուսերեն բնօրինակն ու պատճենը: Այդ վավերագիրը խիստ կարևորություն է ունեցել Շուշիի գրահրատարակչական պատմության համար: Ռուսերենով գրված լինելը պայմանավորված էր այն

²⁷ ՀԱՍ, ֆ. 319, ց. 1, գ. 167, ք. 15:

²⁸ ՎԱՍ, ֆ. 480, ց. 1, գ. 849, ք. 13 շջ.:

²⁹ ՀԱՍ, ֆ. 319, ց. 1, գ. 167, ք. 14:

հանգամանքով, որ կողմերի միջև հնարավոր վեճերի ծագման դեպքում ռուսական պատկան մարմինները կարողանային միջամտել հարցին:

Այսպես, 1886 թ. դեկտեմբերի 22-ին թեմական հոգևոր դպրոցի հոգաբարձուի թյունը միջնորդել էր կոնսիստորիային, որպեսզի տպարանը վարձակալությամբ հանձներ Դադյանց եղբայրներին³⁰: Հարկ է նկատել, որ տպարանը կառավարվում էր թեմական հոգևոր դպրոցի կողմից, որն էլ իր հերթին ենթակա էր կոնսիստորիային: Ինչպես վերևում տեսանք, գրավաճառանոցի բացման թույլտվությունն ստանալու համար պատկան մարմիններին դիմել էր ոչ թե դպրոցի հոգաբարձուի թյունը, այլ կոնսիստորիան: Հետևաբար, հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ Կովկասի գրաքննական կոմիտեի փաստաթղթերում այս տպարանը հիշատակված է “*Типография Шушинской армянской духовной Консистории*”³¹, իսկ պաշտոնական վիճակագրական վավերագրերում՝ “*Типография Карабагской армяно-григорянской Консистории*”³² անուններով:

Ուստի այս հանգամանքով պայմանավորված՝ հենց կոնսիստորիան իրավական տեսանկյունից պետք է հանդես գար որպես վարձառու: Վերջինս 1887 թ. հունվարի 1-ին, ի դեմս թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոս Սաքինյանցի և անդամներ Հարություն քահանա Մելքոնյանի ու Սիմեոն ավագ քահանա Տեր-Իսրայելյանցի, դպրոցի տպարանը երեք տարի ժամկետով վարձակալության հանձնեց Վահան և Սմբատ Դադյանցներին:

Ստորև ամփոփ կերպով ներկայացնում ենք պայմանագրի 13 կետերը:

- 1) Կոնսիստորիան, համաձայն նախապես ձեռք բերած գույքագրման տվյալների, արագատիպ տպարանն իր բոլոր մեքենաներով, հաստոցներով, տառատեսակներով, պիտույքներով և այլ պարագաներով երեք տարի ժամկետով (01.01.1887 – 01.01.1890) վարձակալության էր տալիս Վահան և Սմբատ Դադյանցներին:
- 2) Տպարանի պահպանման բոլոր ծախսերը՝ ներառյալ տարածքների վարձակալության արժեքը, գրաշարների, վարպետների և այլ ծառայողների վարձատրությունը, Դադյանցները վերցնում էին իրենց վրա:
- 3) Տպարանից ստացված ողջ շահույթը մնում էր երկու եղբայրներին:
- 4) Տպարանից ստացված եկամուտները տնօրինելիս նրանք պարտավորվում էին տարեկան 500 ռուբլի վճարել Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցի

³⁰ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 167, ք. 20 և շրջ.:

³¹ ՎԱԱ, ֆ. 480, ց. 1, գ. 849, ք. 13 շրջ.:

³² Свѣдѣнія о существующихъ въ Россіи типографіяхъ, литографіяхъ, металлографіяхъ, заведеніяхъ, производящихъ и продающихъ принадлежности тисненія, фотографіяхъ, а равно о мѣстахъ книжной торговли, публичныхъ бібліотекахъ и общественныхъ читальняхъ, составленныя по 1-е января 1894 года, с. 36.

հոգաբարձությունը, ընդ որում՝ 1887 թ. հունվարի 1-ին պետք է տային 250 ռուբլի կանխավճար, իսկ 1887 թ. հուլիսի 1-ին՝ մնացած 250 ռուբլին: Հաջորդ երկու տարիների համար վճարը կատարվելու էր նույն սկզբունքով անկախ այն հանգամանքից, թե վարձակալները տպարանից շահույթ կստանային, թե ոչ:

- 5) Վահան և Սմբատ Դադյանցները տպարանը տնօրինելու էին թեմի առաջնորդի հսկողությամբ: Տպարանին անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսը տարվա ընթացքում պետք է չգերազանցեր 50 ռուբլին, իսկ ծախսերը կատարվելու էին կոնսիստորիայի իմացությունով և համապատասխան փաստաթղթերով, քանի որ այդ գումարը ծախսվելու էր սույն պայմանագրի 4-րդ կետով սահմանված տարեկան վարձավճարից: Նրանք իրավունք ունեին տպարանը, ըստ անհրաժեշտության, տեղափոխել Շուշիի մեկ այլ տարածք, որը պետք է նախապես համաձայնեցնեին կոնսիստորիայի հետ:
- 6) Վարձակալները պարտավորվում էին կոնսիստորիայի և դպրոցի հոգաբարձություն համար անվճար ընդունել տպագրական պատվերներ՝ տարեկան մինչև 30 ռուբլու չափով, իսկ այդ գումարը գերազանցելու դեպքում նրանք տպագրական պատվերները կարող էին ընդունել փոխադարձ համաձայնությունով:
- 7) Տպարանի պահպանման, հնարավոր բացթողումների և շարաշահումների համար ամբողջ պատասխանատվությունը կրելու էին Դադյանցները, որոնք պարտավորվում էին փոխհատուցել հնարավոր կորուստների և վնասների համար: Կոնսիստորիային իրավունք էր վերապահված յուրաքանչյուր պահի ստուգել և վերահսկել և՛ տպարանի գործունեությունը, և՛ Դադյանցներին ու տպարանի աշխատակիցներին: Իսկ եթե Կոնսիստորիան նկատեր այնպիսի խախտումներ, որոնք կառաջացնեին վնասակար հետևանքներ, ապա պայմանագիրը միակողմանի կդադարեցվեր, իսկ տպարանի շահագործումը կարգելվեր:
- 8) Դադյանցները պարտավորվում էին կոնսիստորիայի վերահսկողությամբ ունենալ գրանցամատյաններ, որտեղ պետք է նշվեին տպագրական բոլոր պատվերները, ինչպես նաև՝ տպարանի պահպանման համար անհրաժեշտ եկամուտներն ու ծախսերը՝ վավերացված տպարանի կնիքով: Նրանք պարտավորվում էին նաև հոգևոր և աշխարհիկ վերադաս մարմինների պահանջով անհապաղ ներկայացնել հաշվետվություններ տպարանի վիճակի և գործունեության վերաբերյալ:
- 9) Պայմանագրի ժամկետի ավարտից հետո կամ դրա վաղաժամ դադարեցման դեպքում Դադյանցները պարտավոր էին տպարանը կոնսիստորիային հանձնել ըստ գույքագրման տվյալների, որոնցով ընդունել էին՝ ներառյալ վարձակալության ընթացքում իրենց ձեռք բերած գույքը: Դադյանցները

պատասխանատու էին տպագրական արագատիպ մեքենայի անխափան լինելու համար, իսկ եթե հանձնման ժամանակ նրանում որևէ խափանում կամ թերուխտուն հայտնվեր, ապա նրանք պարտավորվում էին դրանք շտկել իրենց միջոցներով: Տառատեսակները և տպագրական մյուս պարագաները վերադարձվում էին այն տեսքով, ինչպիսին որ եղել էին նախքան դրանց գործածումը:

- 10) Առանց կոնսիստորիայի համաձայնության՝ Դադյանցները չէին կարող ինքնակամ փակել տպարանը և վերավարձակալության տալ ուրիշներին:
- 11) Կոնսիստորիան չէր կարող մինչև պայմանագրի ժամկետի ավարտը վարձակալներին հեռացնել տպարանից և ղեկավարի պաշտոնից՝ բացառությամբ սույն պայմանագրի 7-րդ կետով նախատեսված դեպքերի: Հավասարապես Վահան և Սմբատ Դադյանցները ժամկետի լրանալուց առաջ չէին կարող հրաժարվել սույն պայմանագրի կատարումից, հակառակ դեպքում չէին ազատվելու պատասխանատվությունից: Իսկ եթե կոնսիստորիան նրանց հեռացնե՞ր առանց որևէ հիմնավոր պատճառի, ապա վերջիններիս իրավունք կտրվեր պահանջել այդ ժամանակահատվածի ամբողջ վնասի փոխհատուցումը:
- 12) Վահան և Սմբատ Դադյանցները պատասխանատվությունը կիսում էին հավասար չափով: Բացի դրանից՝ ապահովելով պայմանագրի 4-րդ, 9-րդ և 11-րդ կետերով սահմանված՝ վճարումների հետ կապված մասերի պատշաճ կատարումը և տպարանի անխափան վերադարձը՝ նրանք կոնսիստորիային անժամկետ երաշխավոր էին կարգում շուշեցի Սարգիս Խաչանցին (*Տարգիս Խաչուես*) նրա համաձայնությամբ և ստորագրությամբ³³:
- 13) Երկու կողմերը ճշգրտորեն և անխախտ կերպով պետք է կատարեին այս պայմանագիրը, որի բնագիրը պահվելու էր կոնսիստորիայում, իսկ վերջինիս կողմից հաստատված պատճենն ստորագրությամբ փոխանցվելու էր Վահան և Սմբատ Դադյանցներին³⁴:

³³ Պայմանագրի վերջում կարդում ենք. «Ես ՚ի ներոյ ստորագրեալ Շուշաֆաղաֆացի Սարգիս Խաչիե[ա]նցս յօժարով [թեամ]բ իմով երաշխատրվում եմ կատարել այս դաշնադրու[թ]ե[ան] մէջ եղեալ շորորդ, իններորդ ու տասն մէկերորդ յօդուածների գօրու[թ]ի[ւն]ը առանց իրի՛ պատճառանց առ որ ձեռամբ իմով ստորագրեմ Սարգիս Խաչիեանց»:

³⁴ Խաչիկ վրդ. Դադյանցի ֆոնդում պահվում են հիշյալ ձեռագիր պայմանագրի բնօրինակն ու պատճենը: Բնօրինակը (թ. 21-22 շրջ.) գրված է պաշտոնական դրոշմաթղթի վրա, իսկ պատճենը (թ. 23-24 շրջ.) սովորական թղթի վրա, որին հաջորդում են Կարաբաղի թեմի առաջնորդի, կոնսիստորիայի անդամների, Դադյանց եղբայրների և երաշխավորի ստորագրությունները (տե՛ս ՀԱՍ., ֆ. 319, ց. 1, գ. 167): Պաշտոնական դրոշմաթղթի առկայությունը, թեկուզ առանց ստորագրությունների, հիմք է տալիս եզրակացնելու, որ դրա վրա գրված պայմանագիրը հենց բնօրինակն է: Ներկա ուսումնասիրությունը կատարվել է Դադյանցների սովորական պատճենից, քանի որ այն, պայմանագրի բնօրինակի հետ համեմատած, ավելի ընթեռնելի է ու լավ պահպանված:

Ինչպես տեսնում ենք, պայմանագիրը բավական հագեցած է, և նրանում հաշվի են առնված մի շարք մանրուքներ և հետևանքներ: Պատճառն այն էր, որ Ղարաբաղի կոնսիստորիայի և թեմական հոգևոր դպրոցի հոգաբարձություն համար տպարանը բացառիկ և արժեքավոր մի հաստատություն էր, որի վերագործարկման համար մեծ ջանքեր ներդրվեցին: Իսկ պայմանագրի որոշ կետեր, հատկապես Դադյանցների ստանձնած տարեկան վարձատրություն չափը, մտորելու տեղիք են տալիս, թե արդյո՞ք նրանք խորապես գիտակցել են իրենց ստանձնած ֆինանսական այդ բեռի ծանրությունը՝ միաժամանակ տպարանի ծախսերը հոգալու և սեփական եկամուտն ապահովելու անհրաժեշտությունը: Թեև տպարանը վարձակալությամբ հանձնվել էր երկու եղբայրներին, սակայն պաշտոնական գրագրություններում մշտապես հանդես էր գալիս Վ. Դադյանցը՝ որպես տպարանի կառավարիչ, իսկ մինչ տպարանի վարձակալությունը նա ստորագրում էր որպես Շուշիի պատվավոր քաղաքացի:

Դադյանցները չբավարարվեցին կազմատուն, տպարան և գրավաճառանոց ունենալով և նախաձեռնեցին Շուշիում բացել նաև վճարովի գրադարան-ընթերցարան: 1887 թ. հոկտեմբերի 27-ին Վ. Դադյանցը գրում է Ելիզավետպոլի նահանգապետի գրասենյակին՝ խնդրելով թույլատրել հաջորդ տարվա հունվարի 1-ից Շուշիում բացել մասնավոր գրադարան-ընթերցարան³⁵: Վերջինս Վ. Դադյանցը բացում է 1888 թ. հունիսի 1-ից նույն թվի փետրվարի 23-ին նախապես ստանալով դրա պաշտոնական թույլտվությունը³⁶: Գրադարան-ընթերցարանը, որի անդամավճարը տարեկան 5 ռուբլի էր, ամսական՝ 50 կոպեկ, գտնվում էր թեմական հոգևոր դպրոցի տպարանին կից՝ Հասան-Ջալալյանի տանը: Գրադարան-ընթերցարանի անդամ չհանդիսացողներն էլ ամեն անգամ մուտքի դիմաց պետք է վճարեին 5 կոպեկ: Այն բաց էր առավոտյան ժամը 9:00-ից մինչև 21:00-ն: Հայտարարության մեջ նշված է նաև, որ գրադարան-ընթերցարանն ուներ մի քանի հարյուր միավոր հայերեն և ռուսերեն գրքեր³⁷:

Տպարանի շահագործման առաջին տարում Դադյանցները, բացի գրքերի տպագրությունների պատվերներ կատարելուց, նպատակ ունեին նաև զբաղվել

³⁵ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 167, ք. 25:

³⁶ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 167, ք. 26:

³⁷ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 167, ք. 29: Հետաբրեհական է, որ ԿՀԲԸ-ի Շուշիի տեղական վարչությունը 1889 թ. մարտի 10-ին տարածում է Դադյանցների կողմից կառավարվող տպարանում հրատարակված երկլեզու (հայերեն և ռուսերեն) հայտարարություն, ըստ որի՝ նույն թվի մարտի 12-ից Շուշիի Հայոց հրապարակի վրա՝ Խուբլարյան եղբայրների խանութի վերանահաղկում, նախատեսվում էր բացել գրատուն-ընթերցարան: Այն գործելու էր ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 14:00-ն և 17:00-ից մինչև 21:00-ն: Ընկերության անդամ չհանդիսացող յուրաքանչյուր ընթերցող որպես բաժանորդագին պետք է վճարեր տարեկան 4 ռուբլի, ամսական 50 կոպեկ, իսկ օրական 5 կոպեկ (մամրամասն տե՛ս Ս. Պետոյան, «Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի գրադարան-ընթերցարանը», ԼՀԳ, 2019, № 1, էջ 71-72):

հրատարակչական ակտիվ գործունեությունը՝ մասնավորապես 1888 թվականից Շուշիում տպագրելով ամսագիրը: Վ. Դադյանցը, ցանկանալով հրատարակել «Արցախ» անվանումով գրաքննություն ենթակա գրական և քաղաքական բնույթի հայերեն մի ամսագիր³⁸, դիմում է Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր կառավարչապետին (գրությունից բացակայում է ամսաթիվը) թույլտվություն խնդրելով 1888 թ. հունվարի 1-ից սկսել այդ ամսագրի հրատարակումը: Վերջինիս պատասխանատուի, խմբագրի ու հրատարակչի պարտականությունները Վ. Դադյանցը վերցնում էր իր վրա: «Արցախ» ամսագիրը նախատեսված էր հրատարակել Վ. Դադյանցի կառավարման ներքո գործող տպարանում յուրաքանչյուր ամսվա սկզբին՝ 1876-1881 թթ. Թիֆլիսում տպագրված «Փորձ» հայկական ամսագրի ձևաչափով: Ամսագրի տարեկան բաժանորդագիրը սահմանված էր 5 ռուբլի, իսկ կես տարվա համար՝ 3 ռուբլի: Գրությունը կցված ամսագրի բովանդակային ծրագրից պարզ է դառնում, որ Վ. Դադյանցը ցանկանում էր այն տպագրել 8 բաժնով: Դրանց խորագրերն էին՝ 1) պատմություններ, պատմվածքներ, վեպեր (բնօրինակ և թարգմանություն), 2) քննադատական հոդվածներ հայ և ռուս գրականության վերաբերյալ, 3) տեղական ակնարկներ, հոդվածներ (բացառապես Արցախի կենցաղի մասին), 4) քաղաքական ակնարկներ (քաղվածքներ ռուսական ամսագրերից և թերթերից), 5) կովկասյան ակնարկներ (քաղվածքներ կովկասյան մամուլից), 6) գիտական ակնարկներ նոր հայտնագործությունների վերաբերյալ և դրանց հանրայնացում, 7) պոեզիա (բնօրինակ և թարգմանություն), 8) հայտարարություններ³⁹:

Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր կառավարչապետը Վ. Դադյանցի կողմից ամսագիր հրատարակելու ծրագրի առնչությամբ 1887 թ. նոյեմբերի 27-ին գրում է Կովկասի գրաքննական կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե կոմիտեն ի՞նչ դիրքորոշում ունի սույն հարցի կապակցությամբ⁴⁰: Կոմիտեի 1887 թ. դեկտեմբերի 5-ի գրությունից տեղեկանում ենք, որ Վ. Դադյանցի առաջարկը մերժվել է: Նույն գրության վրա առկա է մի դժվարընթեռնելի մակագրություն, որով Կովկասի գրաքննական կոմիտեն հիմնավորում էր մերժումը՝ հայտնելով, որ Թիֆլիսում տպագրվող պարբերականները բավարար թիվով բաժանորդներ չունեն, ուստի հագիվ թե նոր բաժանորդներ գտնվեն «գավառական քաղաք» Շուշիում տպագրվելիք ամսագրի համար: Բացի դրանից՝ Վ. Դադյանցը կոմիտեի

³⁸ «Արցախ» ամսագրի տպագրության թույլտվության և դրա բովանդակային ուղղվածության մասին ամփոփ հիշատակություններ կան Սմբատ Ավագյանի աշխատություններում (տե՛ս Ս. Ավագյան, Դարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), Երևան, 1989, էջ 124, Ս. Ավագյան, Արցախը հայ մշակույթի կարևորությունն օջախ, Երևան, 1991, էջ 133):

³⁹ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 273, ք. 1 և շրջ.:

⁴⁰ ՎԱԱ, ֆ. 480, ց. 1, գ. 818, ք. 1:

համար անծանոթ անձ էր, որը չուներ ամսագիր հրատարակելու փորձ⁴¹:

Մեզ հայտնի է նաև Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր կառավարչապետի 1888 թ. մարտի 17-ի գրույթունը՝ ուղղված Ելիզավետպոլի նահանգապետին, որից տեղեկանում ենք, որ «Արցախ» ամսագրի տպագրության թուլությունների հարցով կառավարչապետը դիմել է Ներքին գործերի նախարարության Մամուլի գործերով գլխավոր վարչությանը (Սանկտ Պետերբուրգ)⁴²: Վերջինս էլ ներկայացված առաջարկին չի տվել իր համաձայնությունը⁴³: Ելիզավետպոլի նահանգապետի գրասենյակից 1888 թ. մարտի 26-ի գրույթամբ հանձնարարվում է այդ մասին հայտնել Վ. Դադյանցին, ինչպես նաև նրան վերադարձնել իր բոլոր փաստաթղթերը⁴⁴: Այսպիսով, Շուշիում ամսագիր հրատարակելու նախաձեռնությունը մնաց անկատար⁴⁵:

Այս նախաձեռնությամբ Վ. Դադյանցը կարող էր մի շարք խնդիրներ լուծել: Նախ, ամսագրի 1-7-րդ բաժինների ընտրությունը վկայում է, որ տեղում կար գիտակրթական և մշակութային ակտիվ կյանք, որի լուսաբանման համար այդ տարիներին քաղաքում որևէ պարբերական չէր հրատարակվում: Հասկանալի է, որ Վ. Դադյանցը լավագույնս գիտակցում էր այս իրողությունը և սույն նախաձեռնությամբ ձգտում էր նաև մենաշնորհային դիրք գրավել Շուշիում, ուր դժվար թե ամսագրի բաժանորդների հնարավոր պակաս զգացվեր: Իսկ 8-րդ բաժինը (հայտարարություններ) կարող էր բավականաչափ եկամուտ ապահովել, քանի որ տպարանի և նրա հրատարակությունների գովազդի արդյունքում կավելանային պատվերները: Պետք է նկատի ունենալ, որ այս շրջանում Շուշին Այսրկովկասի խոշոր քաղաքներից մեկն էր, ուստի այս հանգամանքով պայմանավորված՝ տարբեր հայտարարությունների և գովազդների պատվերների թիվը նույնպես մեծաքանակ կարող էր լինել: Բնական է, որ բնակչության կրթա-

⁴¹ ՎԱԱ, ֆ. 480, ց. 1, գ. 818, ք. 2:

⁴² Տվյալ ժամանակաշրջանում Ռուսական կայսրության տարածքում մասնավոր պարբերական հրատարակելու թույլտվությունը վերապահված էր միմիայն Նեբին գործերի նախարարության Մամուլի գործերով գլխավոր վարչությանը:

⁴³ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 273, ք. 2 և շրջ., ՌՊՊԱ, ֆ. 776, ց. 12, գ. 12 (1888 թ.), ք. 1-6:

⁴⁴ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 273, ք. 3:

⁴⁵ 1883-1885 թթ. Մահտեսի-Հակոբյանցներից Ավագը նախաձեռնել էր Շուշիում հրատարակել «Шушинские объявления» և «Սուրհանդակ» պարբերականները: Դրանք նպատակ ունեին տեղեկություններ հաղորդելու Շուշիի անցյալի և ներկայի մասին, ինչպես նաև զանազան նորությունների և հայտարարությունների միջոցով լուսաբանելու տեղական կյանքը: Սակայն Մամուլի գործերով գլխավոր վարչությունը չթույլատրեց Ա. Մահտեսի-Հակոբյանցին կյանքի կոչելու իր մտահղացումը (տե՛ս ՎԱԱ, ֆ. 480, ց. 1, գ. 554, ք. 1-6 շրջ., ՌՊՊԱ, ֆ. 776, ց. 12 (1883 թ.), գ. 85, ք. 1-13 շրջ., ՌԱԱ, ֆ. 102, ց. 276, գ. 18 մ. 62, ք. 1-5): Իսկ 1888 թ. Մամուլի գործերով գլխավոր վարչությունը չթույլատրեց ոմն Մարկոսովին Շուշիում հրատարակել «Միություն» անվանումով մեկ այլ հայերեն պարբերական (տե՛ս ՌՊՊԱ, ֆ. 776, ց. 12, գ. 71 (1888 թ.), ք. 1-5):

կան և մշակութային կյանքում առաջնակարգ նշանակություն ունեւր մամուլը, որը ժամանակի տեղեկատվութեան հիմնական աղբյուրն էր և արտաքին աշխարհի հետ հաղորդակցման միջոցը:

Վերադառնալով Դադյանցներին վարձակալութեամբ տրված տպարանի եռամյա գործունեութեանը՝ նշենք, որ առաջին տարվա (1887 թ.) տպագրված գրքերից մեզ հայտնի են երկուսը⁴⁶, հաջորդ տարում (1888 թ.) վեցը⁴⁷, իսկ երրորդ տարում (1889 թ.)՝ հինգը, որոնցից երեքը⁴⁸ նախորդ երկու տարիներին տպագրված գրքերի պես հիշատակված են հայ գրքի մատենագիտական ցանկերում: Նշենք, որ մեզ հաջողվեց գտնել 1889 թ. Դադյանցների տպագրած հայերեն-ռուսերեն ևս երկու գրքույկ, որոնցից առաջինը «Յուցակ գրոց Շուշույ հասարակաց ժողովարանի» աշխատութեանն է, իսկ երկրորդը «Կանոններ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Շուշույ Տեղական Վարչութեան Գրատուն-Ընթերցարանի համար» գրքույկն է: Ստացվում է, որ միայն 1889 թ. Դադյանցները Շուշույում առնվազն 5 անուն գիրք են տպագրել, որոնց թիվը հնարավոր է աճի, եթե ի հայտ գան այդ տարում տպագրված այլ նորանուն գրքեր:

Հասկանալի է, որ 1887-1889 թթ. տպագրված վերոթվարկյալ գրքերը չեն կարող արտացոլել Դադյանցների տպագրած գրքերի ամբողջական պատկերը, քանի որ ոչ բոլորն են հայտնի եղել մատենագետներին կամ հասել մինչև մեր օրերը: Եթե անգամ ընդունենք, որ այդ երեք տարիների ընթացքում Դադյանցները տպագրել են ընդամենը 13 անուն գիրք և գրքույկ, ապա դա նույնպես վատ ցուցանիշ չէ՝ հաշվի առնելով անցյալի տպագրական դժվարությունները, ժամանակատար և ծախսալից աշխատանքները: Սակավ են նաև հիշյալ շրջանում տպագրված հայերեն գրքերի մասին վիճակագրական տվյալները: Մեզ հաջողվեց գտնել 1891 թ. Ռուսաստանի տիրապետութեան տակ գտնվող տարածքներում տպագրված հայերեն գրքերի մասին մի վիճակագրութեան կազմված շուշեցի Պետրոս Զաքարյանի կողմից: Հեղինակը նշում է, որ նույն տարում տպագրվել է 132 անուն հայերեն գիրք, ապա հիշատակում է այդ գրքերի տպագրութեան վայրերն ու տպարանները⁴⁹: Ըստ այդ վիճակագրական տվյալների՝ տպագրված

⁴⁶ Վ. Օ. Գօրնի, «Գեորգ Ստեֆենսոն» (թարգմ. ռուսերենից՝ Միրզա Տեր-Սարգսեանցի) և Աօ, «Վէպ թէ պատմութիւն (Ղարաբաղի անցեալը Ապրես Բէկնազարեանցի գրչի տակ)»:

⁴⁷ Աօ, «Վահան Մամիկոնեան (Հայոց պատմութիւնից)» և «Օայրե», Կոստանդին Կ. Մելիֆ-Շահնազարեանց, «Փշրանք», հ. 1 և «Մխախտար եւ իւր վնասները», Մ. Աբեղեան, «Նմուշներ» և Մ. Մուրադեան, «Մանուկն Արտաւազը (պատմական գրոյց)»:

⁴⁸ Սիմէոն Հախումեան, «Մանիկ (Ժամանակակից վէպ)», Կոստանդին Կ. Մելիֆ-Շահնազարեանց, «Ոգելից ըմպելիների վնասակարութիւնը», Վահան Բահանյա Շահնունեանց, «Բացատրութիւն Մատթէոսի աւետարանի ՚ի պէտս դասախօսութեան կրօնի»:

⁴⁹ Վիճակագրական այս տվյալները չեն կարող ամբողջական լինել: Նշեմք միայն, որ վերը հիշատակված 132 անուն գրքերը տպագրվել են հայաբնակ 9 քաղաքների 15 տպարան-

հայերեն գրքերի քանակով Թիֆլիսից և Մոսկվայից հետո հաջորդը Շուշին էր, որտեղ տպագրվել էր 11 անուն գիրք, որից 8-ը՝ Մահտեսի-Հակոբյանցների, իսկ 3-ը՝ հոգևոր դպրոցի տպարաններում⁵⁰: Ստացվում է, որ Դադյանցների տպագրական գործունեության շրջանում (1887-1889) հոգևոր դպրոցի տպարանը հրատարակված գրքերի տեսականիով կարողացել է ապահովել բավարար արդյունքներ: Մյուս կողմից մեր այս գնահատականը հաստատվում է մեկ այլ իրողություններ: «Հանդես ամսօրեայ» ամսագրի 1893 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր համարներում հրատարակված «Ազգային հրատարակությունք 1892 տարույ» ցանկում գետեղված են Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող տարածքներում տպագրված 130 անուն գրքերի մասին տեղեկություններ, որոնցում Թիֆլիսից, Մոսկվայից, Էջմիածնից, Ալեքսանդրապոլից և Պետերբուրգից հետո Շուշին վեցերորդ տեղում էր, որտեղ տպագրվել էր հինգ անուն գիրք⁵¹:

1887-1889 թթ. թեմական հոգևոր դպրոցի տպարանում հրատարակված գրքերը բովանդակային առումով պայմանականորեն կարելի է դասակարգել հետևյալ ուղղությունների՝ բանաստեղծական, վիպական, պատմական, կրոնական, կենսագրական, դասագրքային, առողջապահական, տեղեկատվական և այլն: Ակնհայտ է, որ Դադյանցների տպագրած գրքերն ընդգրկում են տարբեր բնագավառներ՝ նախատեսված ընթերցողների լայն շրջանակների համար: Ճիշտ է, որ գրքերից շատերը տպագրական պատվերներ էին, սակայն Դադյանցները հանդես էին գալիս նաև սեփական նախաձեռնությամբ՝ այս անգամ որպես հրատարակիչ: Այսպես, 1888 թ. տպագրվեց Լեոյի «Վահան Մամիկոնեան» գիրքը, որի անվանաթերթի վրա հիշատակված է «Հրատարակություն Սմբ. Դադեսանի»: Փաստորեն, Շուշիում Դադյանցներն զբաղված էին ոչ միայն տպագրությամբ, այլև կազմարարությամբ, գրավաճառությամբ և հրատարակչական գործով: Սա նշանակում էր, որ Դադյանցները կարող էին դառնալ Մահտեսի-Հակոբյանցների մրցակիցները:

Ստեփան Մալխասյանցը «Մշակ» օրաթերթում բավական հետաքրքրական մի հոդված է տպագրել, որով կարևոր վիճակագրական վերլուծություններ է կատարել 1892 թ. Ռուսաստանի և Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ եղած տարածքներում տպագրված հայերեն հրատարակությունների մասին: Այդ վիճակագրությունից պարզ է դառնում, որ 1892 թ. տպագրված հայերեն

ներում: Բացակայում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանը, որտեղ 1891 թ. հրատարակվել էին մեկ տասնյակից ավելի գրքեր:

⁵⁰ Պ. Զաֆարեան, «Հայերեն գրքերի հրատարակութեան գործը ռուսահայերի մէջ 1891 թ.», Մուրճ, Թիֆլիս, 1892, № 7-8, էջեր 1173, 1176:

⁵¹ «Ազգային հրատարակութիւնք 1892 տարույ», Հանդես ամսօրեայ, Վիեննա, 1893, № 10, էջ 301-303, № 11, էջ 344-345, № 12, էջ 366-367:

գրքերի թվում գերակշռում են վեպերն ու դասագրքերը⁵²: Հետևաբար, կարող ենք պնդել, որ Դադյանցներն իրենց կառավարման ներքո գտնվող տպարանի գործունեությունը համապատասխանեցնում էին ժամանակի պահանջներին:

Նախկինից եկող ավանդույթի համաձայն՝ «հայկական տպագրություն» արտահայտությամբ հայագիտական գրականության մեջ անցյալում նկատի էին առնվում միայն գրքերն ու պարբերականները: Դրանով պայմանավորված՝ մինչ օրս շրջանառվում են ավանդաբար կիրառվող «գրքի պատմություն», «մամուլի պատմություն» ձևակերպումները: Հայկական տպագրության անցած ուղու ուսումնասիրությունից հետևում է, որ «հայկական տպագրություն» արտահայտությամբ պետք չէ ընկալել բացառապես գրքի և մամուլի հրատարակությունները, այսինքն՝ «խոշոր տպագրություններ»-ը, քանի որ տպարանները դրանց զուգահեռ սկսեցին հրատարակել նաև «մանր տպագրություններ»: Սույն ձևակերպմամբ պետք է հասկանալ ոչ թե փոքրածավալ տպագրություններ, այլ՝ քիչ («մանր») բովանդակություն ունեցող տպագրություններ, ինչպիսիք են հայտարարությունների, ձևաթղթերի, հրավիրատոմսերի, այցեքարտերի, բացիկների, հաշվետվությունների, հաշվեցույցների, վկայականների, թռուցիկների, թերթոնների, թատերական ազդագրերի, ծրագրերի, ճաշացանկերի և նմանատիպ հրատարակությունները, որոնք ունեին կիրառական նշանակություն և ծառայում էին բնակչության առօրյա կարիքներին: Սրանք եկան լրացնելու «խոշոր տպագրություններ»-ին:

Ունենալով կրթամշակութային մեծ նշանակություն և հանդիսանալով տեղեկատվության փոխանցման առաջնակարգ աղբյուրներ՝ «խոշոր տպագրություններ»-ը հիմնականում ունեցել են մեծ տպաքանակ և լայն տարածում, որոնց շնորհիվ էլ հանգրվանել են տարբեր գրադարաններում, կրթամշակութային հաստատություններում և անհատական հավաքածուներում: Այսպես «խոշոր տպագրություններ»-ը մեծ մասամբ պահպանվել են կորստից՝ հասնելով մինչև մեր օրերը: Այս իրողությունը դյուրացրել է գրքի և մամուլի ուսումնասիրությունը, որի արդյունքում հրատարակվել են բազմաթիվ արժեքավոր աշխատություններ: Այլ է «մանր տպագրություններ»-ի պարագան, ինչն այդքան էլ ուսումնասիրված չէ հայագիտության մեջ⁵³: Պատճառն այն է, որ, ի տարբերություն «խոշոր տպագրություններ»-ի, սրանք փոքրաթիվ տպաքանակ և սահմա-

⁵² Ստ. Մալխասեան, «Հայերէն հրատարակութիւններ 1892 թին», *Մշակ*, Թիֆլիս, 1894, № 4, էջ 1-2:

⁵³ Հ. Սաֆիասյան, Ս. Պետոյան, «XIX դարի վերջին ֆառոդի և XX դարի սկզբի արևելահայ «մանր տպագրությունների» աղբյուրագիտական արժեքը (թատերական ազդագրերի և ծրագրերի օրինակով)», տե՛ս *Գրատպությունը Արևելյան Հայաստանում 1828-1920 թվականներին (հոգվածների ժողովածու)*, Երևան, 2021, էջ 154-169:

նափակ տարածում ունեցող հրատարակություններ էին՝ հասկանալիորեն դժվարություններ պահպանված:

Հետևաբար, Դադյանցների գրահրատարակչական գործունեության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար պետք է ուսումնասիրել նաև նրանց «մանր տպագրություններ»-ը: Հասկանալի է, որ այս դեպքում Դադյանցները տպարանը պետք է ծառայեցնեին նաև Շուշիի կրթամշակութային կյանքի զարգացմանը: Այդ տարիներին, որպես օրինակ, ակտիվ գործունեություն էր իրականացնում ԿՀԲԸ-ի Շուշիի մասնաճյուղը, որի անդամներից էր Վ. Դադյանցը⁵⁴: Ինչպես արդեն տեսանք, Դադյանցների կառավարման ներքո գտնվող տպարանում նրանք տպագրել էին ԿՀԲԸ-ի Շուշիի գրադարան-ընթերցարանի կանոնադրությունը: Բացի դրանից՝ պահպանվել են նույն տպարանում ԿՀԲԸ-ի Շուշիի մասնաճյուղին և գրադարան-ընթերցարանին առնչվող տարաբնույթ «մանր տպագրություններ»: Իրանցից հատկապես կարևորում ենք ԿՀԲԸ-ի Շուշիի մասնաճյուղի գրադարան-ընթերցարանի բացման հայտարարության հրատարակությունը՝ ռուսերեն և հայերեն զուգադիր թարգմանություններ⁵⁵:

Դադյանցների կատարած «մանր տպագրություններ»-ը պետք է նույնպես վերաբերեին նաև իրենց բացած գրադարան-ընթերցարանին: Մեզ է հասել դրա բացման հայտարարությունը («Ազդ»)՝⁵⁶ ռուսերեն և հայերեն զուգադիր թարգմանությամբ, ըստ որի՝ Դադյանցներն իրենց գրախանութում անվճար տրամադրում էին ընթերցարանից օգտվելու կանոնները, որոնք, անկասկած, տպագիր պետք է եղած լինեին: Դադյանցների «մանր տպագրություններ»-ից որոշները պահպանվել են հենց Վ. Դադյանցի անձնական հավաքածուի շնորհիվ:

1889 թ. սեպտեմբերի 11-ի թվագրմամբ պահպանվել է Վ. Դադյանցին տրված տպագիր վկայականը, որում նշվում է նրա՝ պարկեշտ անձնավորություն և «ճարտար» կազմարար լինելը: Վկայականի ներքո կան չորս վկաների՝ Առաքել Բաբախանյանցի (Աեո)⁵⁷, Գաբրիել Դուլյանցի, Ս. Գուլզադյանի և Բագրատ Տեր-Սահակյանցի⁵⁸ ստորագրությունները: Դատելով վկայականի գեղարվեստական հարդարանքից և ձևանմուշի բնույթ ունեցող բովանդակությունից՝ կարելի է եզրակացնել, որ այդ վկայականը տպագրվել է բազմօրինակ, այն էլ՝

⁵⁴ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 169, ք. 15:

⁵⁵ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 169, ք. 1-2:

⁵⁶ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 167, ք. 29:

⁵⁷ Նույն թվականի սեպտեմբերի սկզբին Լեոն ընտրվել էր Ղարաբաղի հայոց Հոգևոր դպրոցի հոգաբարձության անդամ (տե՛ս Հաշի Դարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր դպրանոցի հոգաբարձութեան 1889-1890 ուսումնական տարուայ համար, 1890, էջ 4:)

⁵⁸ 1894 թ. մարտի 10-ին Բ. Տեր-Սահակյանցին թույլատրվեց Շուշիում բացել գրավաճառանոց, իսկ 1900 թ. հունիսի 2-ին՝ տպարան՝ ծավալելով գրահրատարակչական ակտիվ գործունեություն (տե՛ս ՎԱԱ, ֆ. 13, ց. 6, գ. 252, թթ. 8 շրջ., 11 շրջ.):

Դադյանցների կառավարման ներքո գտնվող տպարանում, քանի որ այն տրված էր հենց Վ. Դադյանցին:

Այդ տարիներին Ռուսական կայսրությունում տպագրության գրաքննությունը չէր շրջանցում նաև «մանր տպագրություններ»-ը: Մասնավորապես, հայտարարությունների, թատերական ազդագրերի ու ծրագրերի տպագրություններում, աննշան բացառություններով, նշված էր դրանց՝ գրաքննված լինելու հանգամանքը: Այդպիսի տպագրությունները թույլատրում էին գավառապետները, իսկ տպագրությունների վերջում գրեթե միշտ ռուսերենով հիշատակվում էր տպագրության վայրը, տպարանի անվանումը, տպագրությունը թույլատրած գավառապետի անունն ու թույլտվության ամսաթիվը: Նույնը վերաբերում էր նաև Դադյանցների «մանր տպագրություններ»-ին: Իսկ վերջիններիս տպագրած գրքերը գրաքննվում էին Թիֆլիսում գտնվող Կովկասի գրաքննական կոմիտեի ավագ գրաքննիչ Սողոմոն խան Մելիք-Մեհրաբովի կողմից, ով հայտնի էր իբրև «ծայրահեղ ռեակցիոն գրաքննիչ»⁵⁹: Այդուհանդերձ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին էր վերապահված հոգևոր գրաքննության իրավունքը, ինչն էլ այդ ժամանակաշրջանում ուներ առանձնահատուկ ընթացակարգ: Որպես օրինակ՝ բերենք Վահան քահանա Շահունյանցի աշխատասիրած «Բացատրություն Մատթէոսի աւետարանի 'ի պէտս դասախօսութեան կրօնի» աշխատությունը (1889), որի անվանաթերթի դարձերեսին առկա է հետևյալ տեղեկությունը. «Ընթերցեալ գայս բացատրութիւն Ս. Աւետարանին Մա[տ]թէոսի, չգտի ինչ է սմին ընդ դէմ ուղիղ վարդապետութեան Հայաստանեայց Ս. եկեղեցոյ: Ի 1888 ամի, 'ի 14 Յուլիսի: Նախագահ տպար. ժողովոյ սրբոյ էջմիածնի: Արիստակէս Եպիսկոպոս: Թ. 315»: Կովկասի գրաքննական կոմիտեն էջմիածնի գրաքննությունից հետո միայն պետք է տար իր թույլտվությունը, որն էլ տեղի ունեցավ 1889 թ. ապրիլի 30-ին: Վահան քահանա Շահունյանցի այս աշխատությունից բացի՝ հայտնի են արխիվային վավերագրեր, որոնք 1898 թ. նոյեմբերին Վահան քահանան գրել էր օրվա կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին՝ ներկայացնելով իր աշխատասիրած որոշ գրքերի մասին տեղեկություններ և խնդրելով արտոնել դրանց տպագրությունը⁶⁰: Սա ցույց է տալիս, որ տվյալ ժամանակաշրջանում հատկապես կրոնական բնույթ ունեցող գրքերի տպագրության թույլտվությունը հեշտովյամբ չէր տրվում, այլ պահանջվում էր երկարատև ընթացակարգ:

⁵⁹ Սողոմոն խան Մելիք-Մեհրաբովը Կովկասի գրաքննական կոմիտեում աշխատել է 1872-1890 թթ. իբրև տեղական և արևելյան լեզուներով տպագրվող գրքերի ավագ գրաքննիչ, ով աչքի է ընկել հայերեն գրքերի և մամուլի նկատմամբ դրսևորած իր կամայական մոտեցումներով (տե՛ս Մ. Մխիթարյան, «Կովկասի գրաքննական կոմիտեի նյութերից», ՊՔՀ, 1974, № 3, էջ 105-106):

⁶⁰ ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 397, ք. 5-6:

Վերագառնալով Դադյանցներին վարձակալությամբ տրված տպարանի պարտավորություններին՝ նշենք, որ այս մասին Լեոն ուշագրավ տեղեկություն է հաղորդում 1890 թ. իր կազմած հաշվետվության մեջ: Նա նշում է, որ միայն առաջին տարվա համար են «կառավարիչները վճարել 500 ռուբլի վարձ»: Որոշ ժամանակ անց թեմական հոգևոր դպրոցի հոգաբարձությանը տեղյակ է պահվել, որ իրենց տպարանը չէր կարողանում հաջորդ տարիների համար վճարել տարեկան 500 ռուբլի վարձը, ինչպես նախատեսված էր պայմանագրով: Ուստի հոգաբարձությանն առաջարկ է արվել տարեկան վարձը 500-ից նվազեցնել մինչև 250 ռուբլի: Լեոյի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ թեմական հոգևոր դպրոցի հոգաբարձությունը 1890 թ. հունվարին այլևս չի երկարացրել վարձակալների հետ կնքված պայմանագիրը, քանի որ նրանց անհոգության և վատ աշխատանքի պատճառով տպարանի դերն ընկել էր: Հոգաբարձությունն այն համոզմունքն է ունեցել, որ տառերի ու տպագրական մեքենաների պակասության պատճառով հիշյալ տպարանը չի կարողացել մրցակցել Մահտեսի-Հակոբյանցների տպարանի հետ: Լեոն ավելացնում է, որ որևէ տպարան կարող էր նշանավոր գործ կատարել այն ժամանակ, երբ ունենար ֆինանսական խոշոր ներդրումներ: Ելնելով այս մոտեցումից՝ հոգաբարձությունը հարցի լուծումը տեսել է տպարանի կարիքները դպրոցի եկամուտների միջոցով աստիճանաբար լրացնելու մեջ՝ վճռելով իր հնարավորության սահմաններում ցուցաբերել ֆինանսական օգնություն⁶¹:

Լեոյի նույն հաշվետվության մեջ, առանց Դադյանցների անունը հիշատակելու, նշված է, որ տպարանի կառավարման ժամանակաշրջանը (1887-1889 թթ.) խիստ անբարենպաստ էր անդրադարձել դրա գործունեության վրա, քանի որ կառավարիչները ոչ թե մտածել են տպարանի օգտի մասին, այլ հետապնդել են միմիայն իրենց անձնական շահը: Որպես օրինակ՝ Լեոն նշում է, որ կառավարիչներն այնքան անբարեխիղճ են գտնվել, որ տպարան բերված տառերի համար չեն վճարել 400 ռուբլի գումարը: Փոխարենը ձուլարանի տերն այն պահանջել է տպարանից: Դպրոցի հոգաբարձությունը պահանջված գումարը չի կարողացել ստանալ նախկին կառավարիչներից, քանի որ նրանք արդեն լքել էին քաղաքը՝ խուսափելով պատասխանատվությունից: Հաշվի առնելով այս ամենը՝ հոգաբարձությունը որոշում է տպարանը կառավարել սեփական ուժերով և անձամբ հոգ տանել նրա մասին⁶²:

Նկատենք, որ տպարանի համար տարեկան 500 ռուբլի վարձ վճարելու Դադյանցների ստանձնած պարտավորությունն իսկապես ծանր էր: Մյուս կող-

⁶¹ Հաշիւ Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր դպրանոցի հոգաբարձութեան 1889-1890 ուսումնական տարուայ համար, 1890, էջ 17-18:

⁶² Նույն տեղում, էջ 18:

մից, հաջորդող երկու տարիների համար վարձակալությունը կիսով չափ կրճատելը հավանաբար չի արդարացրել Դադյանցների հույսերը: Միգուցե այլ շարժառիթներով է պայմանավորված, որ Վ. Դադյանցը⁶³ 1888 թվից զուգահեռաբար իրականացրել է նաև հոգևոր ծառայություն⁶⁴: Այս ամենը թույլ է տալիս ենթադրելու, որ տպարանի վարձակալության վերջին շրջանում այն կառավարել է առավելաբար Սմբատ Դադյանցը:

Սույն ուսումնասիրության նպատակն է գիտական շրջանառության մեջ դնել Դադյանցների այդ տարիներին Շուշիում ծավալած գրահրատարակչական գործունեության անհայտ տեղեկությունները: Թեև Վահան և Սմբատ Դադյանցների կազմատունը, տպարանը, գրավաճառանոցը և գրադարան-ընթերցարանը հիմնադրվել էին որպես եկամտի կայուն աղբյուրներ, սակայն դրանք միաժամանակ դարձան Շուշիի մշակութային և կրթական կյանքի կարևորագույն օջախները: Ուստի պետք է արժանին մատուցել Դադյանց եղբայրներին, որոնք ֆինանսական և կազմակերպչական դժվարությունների պայմաններում կարողացան Շուշիում իրականացնել գրահրատարակչական լայնածավալ գործունեություն: Նրանց «խոշոր և մանր տպագրություններ»-ը պարունակում են բովանդակային տարբեր ժանրեր՝ աչքի ընկնելով գեղարվեստական նրբաճաշակ հարդարանքներով և բավարարելով ժամանակի պահանջները:

⁶³ Վահան Դադյանցը՝ արդեն որպես հաշիկ ծայրագույն վարդապետ, իր հետագա տարիների հոգևոր գործունեության ընթացքում հեռու չէր տպագրական աշխատանքներից: Այսպես, 1910 թ. հունվարի 10-ին Մատթեոս Բ. Իզմիրյան կաթողիկոսի կոնդակով նա նշանակվել էր Մայր Աթոռի տպարանի պատասխանատու (կառավարիչ): 1915 թ. նոյեմբերի 5-ին էջմիածնի դիվանապետի՝ հաշիկ ծայրագույն վարդապետին գրած նամակից տեղեկանում ենք, որ տպարանի պատասխանատուի պաշտոնը եղել է առանց վարձատրության (տե՛ս ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 205, թթ. 1, 13):

⁶⁴ 1922 թվականի հոկտեմբերի 10-ին հաշիկ ծայրագույն վարդապետի գրած ինֆնակենսագրականից անհասկանալի կերպով դուրս են մնացել 1880-ական թթ. իր ծավալած կրթամշակութային և գրահրատարակչական գործունեության մասին տեղեկությունները: Նույն ինֆնակենսագրականից տեղեկանում ենք, որ նա 1888 թվականին ձեռնադրվել է կուսակրոն սարկավագ՝ պաշտոնավարելով Արցախի մի քանի վանքերում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 287, թ. 1): Ավարդ Ղազիյանը հաշիկ վրդ. Դադյանցի մասին գրված արժեքավոր ուսումնասիրության մեջ սարկավագ ձեռնադրվելու տարեթիվ է հիշատակում նույն 1888 թվականը (տե՛ս Ա. Ղազիեան, «հաշիկ Մ. Վարդապետ Դադեանի ժողովրդագիտական-բանահաստիքական գործունեությունը», ՀԱ, 1999, № 1-12, էջ 387): Ավելին, այդ ուսումնասիրությունը որոշակի լրացումներով հետագայում տպագրվել է հաշիկ Դադյանցի հողվածների ժողովածուի առաջաբանում: Հեղինակը նշում է, որ Վահան Դադյանցը սարկավագ է ձեռնադրվել 1889 թվականի ապրիլի 30-ին Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում (տե՛ս «Արարատ»-ի ժառանգությունը, Գ, հաշիկ Մ. Վարդապետ Դատյան հոգևածների ժողովածու, Ս. էջմիածին, 2007, էջ 7): Այս թվականը մեզ արժանահավատ չի թվում, քանի որ Վ. Դադյանցի կենսագրությունն ավելի կարևոր սկզբնաղբյուր է, մանավանդ որ Ա. Ղազիյանը չի հիշատակում իր հայտնած տվյալի աղբյուրը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՀԲԸ - Կովկասի հայոց բարեգործական ընկերություն

ՀԱԱ - Հայաստանի ազգային արխիվ

ՌԱԱ - Ռուսաստանի ազգային արխիվ

ՌՊՊԱ - Ռուսաստանի պետական պատմական արխիվ

ՎԱԱ - Վրաստանի ազգային արխիվ

Ֆ.- ֆոնդ

ց.- ցուցակ

գ.- գործ

մ.- մաս

թ.- թերթ

շրջ.- շրջերես

STYOPA PETOYAN**PUBLISHING ACTIVITIES OF VAHAN AND SMBAT DADYANTS‘
IN SHUSHI IN THE 1880S**

Keywords: Armenian Diocese of Karabakh, spiritual-diocesan school, Shushi, brothers Dadyants‘, printing house, book publishing, censorship.

In the 1880s, Vahan and Smbat Dadyants‘ carried out wide educational and cultural activities in Shushi. In particular, they opened a bindery, a bookstore and a library-reading room, and in 1887–1889 they rented the quick-print printing house of the Armenian Diocesan School of Karabakh. It is true that the management these establishments was a stable source of income for the Dadyants‘ brothers but besides this, they became the most important centers of Shushi’s cultural and educational life. Their “large and small publications” of those years contain different genres and are distinguished with elegant artistic design satisfying the demands of the time. This should be appreciated, because in the conditions of financial and organizational difficulties, the Dadyants‘ brothers were able to carry out large-scale publishing activities in Shushi.

It should be noted that in the following decades Vahan Dadyants‘ became especially prominent as a collector of valuable manuscripts and rare items, as a scholar and public figure. Later on he was better known by his clerical name Proto-Archimandrite Khachik Dadyants‘.

СТЁПА ПЕТОЯН**ИЗДАТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ВААНА И СМБАТА
ДАДЯНЦЕВ В ШУШИ В 1880-Х ГОДАХ**

Ключевые слова: Армянская епархия Карабаха, епархиальное духовное училище, Шуши, братья Дадянц, типография, книгоиздательство, цензура.

В 1880-х годах Ваан и Смбат Дадянц развернули в Шуши широкую просветительскую и культурную деятельность. В частности, они открыли переплетную мастерскую, книжный магазин и библиотеку-читальню, а в 1887–1889 годах арендовали скоропечатную типографию Армянского епархиального училища Карабаха. Управление этими заведениями было для братьев Дадянц стабильным источником дохода, но, помимо того они стали важнейшими центрами культурно-просветительской жизни в Шуши. Большие и малые публикации, которым они способствовали в те годы, имеют разножанровое содержание, отличались изящным художественным оформлением и отвечали запросам времени. Братьям Дадянц удавалось вести в Шуши масштабную издательскую деятельность даже в условиях финансовых и организационных трудностей.

Следует отметить, что из братьев в последующие десятилетия особенно выделялся Ваан Дадянц – собиратель ценных рукописей и редких предметов, ученый-исследователь и национальный общественный деятель, впоследствии более известный под своим церковным именем как Протоархимандрит Хачик Дадянц.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում..... 5

Ստյոպա Պետոյան

Վահան և Սմբատ Դադյանցիների գրահրատարակչական
գործունեությունը Շուշիում 1880-ական թթ. 33

Անի Ոսկանյան

Ադանայի նահանգի հայերի տնտեսության վերականգնման
փորձերը 1910-1914 թթ. 55

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գլորգ Տէր-Վարդանեան

Յովհաննէս Վ. Զօհրապեանի ձեռագրական և բնագրագիտական վաստակը.
Ինֆնակենսագրականը..... 67

Օվսաննա Խաչատրյան

Գրիգոր Խլաթեցու կաֆաները որպես գանձարանային կաֆաների առաջին նմուշներ..... 91

Հայկ Համբարձումյան

Սննդային մոտիվները «Սասնա ծռեր» էպոսում և հայ
միջնադարյան գրականության մեջ. հերոսների նաշացանկը 105

Գառնիկ Ա. Հարությունյան

«Կտակ շարչարանաց»-ի կամ Ավագ ուրբաթի ֆարոգի՝ Սիմեոն
Ա. Երևանցի կաթողիկոսի խմբագրությունը 133

Հասմիկ Բադալյան

Կիրիկյան Հայաստանի Զորովանքը և գրչական ժառանգությունը 150

Դավիթ Սրկ. Սահակյան

Կրկին «Հանախասպատոմ հառերի» հեղինակի ու թվագրման հարցի շուրջ,
Աբրահամ Տերյանի մի հրատարակության առթիվ 165

ԱՐՎԵՍ

Իվեթ Թաշարյան, Սարա Լափորթ-Էֆթելսարյան

Մատենադարանի նորահայտ նկարագարող մի էջ, որպես մշակութային
ազդեցությունների խորհրդանիշ 186

Միրանույ Բեգլարյան

Թորոս Տարոնացու մանրանկարների պատկերագրության մարիամաբանական հեներ 196

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**Ստելլա Վարդանյան**

Քսուֆի և օժանելիֆի պատրաստման հին հայկական դեղագիրը
Քսենոֆոնի «Անաբասիս» երկում 215

Կարինե Մոսիկյան

Մարմնագննական (ֆիզիոգնոմիկական) երկերը Մատենադարանի ձեռագրերում 225

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 7-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
(2021 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-27) ՆՅՈՒԹԵՐ**

Զոհրաբ Գևորգյան

Թուղթը, առօրեականությունը և հասարակական փոխակերպումները
Կիլիկյան Հայաստանում 248

Գևորգ Ղազարյան

Դոնվիակ պատարագի ավանդույթը Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգում 259

Անդրանիկ Եսայան

Զակամ Գավառը ժէ դ.-ժԸ դ. Առաջին Քառորդին 285

Տիգրան Գրիգորյան

«Աղամի արարումը» թե՛ «Հին ատուրցն Աստուած».
Դանիել մարգարեի վախճանաբանական տեսիլքը Նորավանքում
(վերլուծություն ըստ կանոնական և պարականոն բնագրերի) 299

Շողակաթ Դևրիկյան

Գրիգոր Լուսավորչին ներկայացնող մեկէջյա փորագրանկարները 18-րդ դարում
Կոստանդնուպոլսում տպագրված երեք «Յայսմատուր»-ներում 331

Գրեհա Գասպարյան

Նոր Զուղայում նկարագարողված ՄՄ 6772 Ավետարանի մեկ
էջը արևմտաբրիտանական արվեստի համատեքստում 342

Արմինե Պետրոսյան

Թոչնամարտի թեման Հայաստանի Ժ-ԺԴ դարերի եկեղեցական ֆանդակում.
պատկերագրությունը և խորհրդաբանական եզրերը 353

Վահե Ավետիսյան

Հույն (Բյուզանդական) ուղղափառ եկեղեցու հետևորդ համայնքը
Կիլիկիայում ԺԳ-ԺԴ դդ. կեսերին 366

Հովհաննես Ա. Իգիթյան

Սարգիս Փիլիսոփա Բ-ի կորսված 532-ամյա պարբերաշրջանները.

Վերականգնում մաս երկրորդ. Հայոց շարժական տոմար-պարբերաշրջանը..... 379

Գոռ Գալստյան

Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ» երկը 425

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**Անի Առաքելյան**

Հակոբ երեց Ամասիացի (Էմասիացի). հայկական ուշ միջնադարի

նորահայտ բանաստեղծը 445

Տաթևիկ Մանուկյան

Տեր Խաչատուր Քուրտանցին և նրա փերականությունը 476

Վանո Եղիազարյան, Անի Ժ. Ավետիսյան

Մի անտիպ երկլեզվյան տաղ Հովհաննես Թյկուրանցուց 504

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Լուսինե Սարգսյան**

Հայ ձեռագրավեստի ուսումնասիրությունը թվային դարում..... 509

Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը

վերաբերող պահանջներ 525

CONTENTS
HISTORY**Gagik Danielyan**

Official Correspondence and Diplomatic Gifts in the
Armenian-Mongol Relations (Parts 1 and 2).....5

Styopa Petoyan

Publishing Activities of Vahan and Smbat Dadyants‘
in Shushi in the 1880s.....33

Ani Voskanyan

The Armenians’ Attempts to Revive the Economy in Adana
Province Between 1910 and 1914.....55

PHILOLOGY**Gevorg Ter-Vardanyan**

Yovhannēs Vardapet (Archimandrite) Zohrapean as
Text Critic and Scribe, His Autobiography.....67

Ovsanna Khachatryan

The *Kafas* of Grigor Khat‘ets‘i as the First Samples
in the Collections of Sacred Chants91

Hayk Hambardzumyan

Food Motives in the Epic “Daradevils of Sassoun” and in the
Armenian Medieval Literature: Heroes' Menu.....105

Garnik A. Harutyunyan

The Recension of the “Testament of the Passion
[of Christ]” or the Sermon of Good Friday by Catholicos Simeon I Erewants‘i133

Hasmik Badalyan

Dzorovank‘ Monastery of Cilician Armenia
and its Scriptorial Heritage.....150

Deacon David Sahakyan

Once Again on the Authorship and Date of “The Oft-Repeated Discourses
of St. Gregory the Illuminator”: on the Occasion of a Recent Publication
by Abraham Terian.....165

ART

Yvette Tajarian, Sarah Laport-Eftekharyan

A Newly Discovered Illustrated Page as a
Symbol of Cultural Influences.....186

Siranush Beglaryan

The Mariological Basis of T'oros Taronats'i's Iconography.....196

NATURAL SCIENCES

Stella Vardanyan

The Ancient Armenian Recipe for Preparing Ointment and Incense
According to Xenophon's *Anabasis*.....215

Karine Mosikyan

Physiognomical Works in the Manuscripts
of Matenedaran.....225

**PROCEEDINGS OF THE 7TH INTERNATIONAL CONFERENCE OF
YOUNG RESEARCHERS (NOVEMBER 25-27, 2021)**

Zohrab Gevorgyan

Paper, Everyday Life and Social Transformations
in Cilician Armenia.....248

Gevorg Kazaryan

The Tradition of the Liturgy Behind Closed Doors in the Armenian
Apostolic Church Rite.....259

Andranik Yesayan

The Province of Zakam in the 17th Century and the First
Quarter of the 18th Century.....285

Tigran Grigoryan

The Creation of Adam or Ancient of Days?: The Prophetic Vision of Daniel
in Noravank' (a Discussion on the Basis of Canonical and Apocryphal Texts).....299

Shoghakat Devrikyan

Full-Page Engravings with Images of Gregory the Illuminator in the
Three Synaxaria Published in the 18th Century in Constantinople.....331

Greta Gasparyan

One Page of the Gospel M 6772 Illustrated in New Julfa in the
Context of Western Christian Art.....342

Armine Petrosyan

Birds Combat Scene in Armenian Church Decoration of X-XIV
Centuries: Iconography and Symbolic Perceptions.....353

Vahe Avetisyan

Greek-Orthodox (Byzantine) Community in Cilicia
From the XIII - to the Middle of the XIV Century.....366

Hovhannes A. Igityan

The Lost 532 Years Calendar-Cycles of Sargis Philosopher the Second.
Reconstruction (Part II. The Armenian Non-Fixed
Calendar and the 532-Year Cycle).....379

Gor Galstyan

The *Commentary of the Armenian Calendar*
by Yovhannēs Sarkavag.....425

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Priest Yakob Amasiats‘i (Emasiats‘i):
An Unknown Late Medieval Armenian Poet.....445

Tatevik Manukyan

Ter Khach‘atur K‘urtk‘ants‘i and His Grammar.....476

Vano Yeghiazaryan, Ani J. Avetisyan

An Unpublished Poem by Yovhannēs T‘lkurants‘i.....504

REPORT**Lusine Sargsyan**

Study of Armenian Manuscript Art in Digital Era.....509
Requirements for the articles in the journal of The *Bulletin of Matenadaran*.....525

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Гагик Даниелян

Официальная переписка и дипломатические дары в Армяно-Монгольских отношениях (части 1 и 2).....5

Стёпа Петоян

Издательская деятельность Ваана и Смбата Дадянцев в Шуши в 1880-х гг.....33

Ани Восканян

Попытки армян восстановить экономику в провинции Адана в 1910–1914 гг.....55

ФИЛОЛОГИЯ

Геворг Тер-Варданян

Рукописное и текстологическое наследие вардапета Ованеса Зограбяна и его автобиография.....67

Овсанна Хачатрян

Кафы Григора Хлатеци как первые образцы жанра в певческих сборниках-гандзаранах.....91

Айк Амбарцумян

Пищевые мотивы в эпосе «Сасна црер» (Давид Сасунский) и в армянской средневековой литературе: меню героев.....105

Гарник А. Арутюнян

Редакция “Завещания страстей...”, или проповеди Страстной пятницы католикоса Симеона I Ереванци.....133

Асмик Бадалян

Рукописное наследие монастыря Дзорованк Киликийской Армении.....150

Диакон Давид Саакян

Вновь об авторстве и времени создания “Многовещательных речей св. Григория Просветителя” (по поводу публикации Абраама Терьяна).....165

ИСКУССТВО

Ивет Таджарян, Сара Лапорт-Эфтехарян

Новооткрытая иллюстрированная страница как символ культурных влияний..... 186

Сирануш Бегларян

Мариологическая основа иконографии Гороса Таронаци..... 196

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

Стелла Варданян

Древний армянский рецепт приготовления мази и благовония из «Анабасиса» Ксенофонта 215

Карине Мосикян

Сочинения о физиогномике в рукописях Матенадарана 225

ИЗ МАТЕРИАЛОВ 7-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ МОЛОДЫХ УЧЕНЫХ (25-27 НОЯБРЯ, 2021 Г.)

Зограб Геворгян

Бумага, повседневная жизнь и социальные преобразования в Киликийской Армении..... 248

Геворг Казарян

Традиция Литургии при Закрытых Дверях в обиходе Армянской Апостольской церкви..... 259

Андраник Есяян

Провинция Закам в 17 – первой четверти 18 в..... 285

Тигран Григорян

“Сотворение Адама” или “Ветхий Днями”: пророческое видение Даниила в Нораванке (анализ по Каноническим и Апокрифическим текстам) 299

Шогакат Деврикян

Полнолистовые гравюры с изображением Григория Просветителя в трех сборниках «Синаксария», изданных в XVIII веке в Константинополе..... 331

Грета Гаспарян

Страница Евангелия М 6772 в контексте Западно-христианского искусства..... 342

Армине Петросян

Сюжет с «Борющимися» птицами в церковной пластике
 Армении X-XIV вв.: иконография и символизм.....353

Ваэ Аветисян

Греко-Православная (Византийская) община
 в Киликии XIII - середины XIV вв.....366

Ованнес А. Игитян

Утраченный 532-летний календарный цикл Саргиса Философа второго.
 Реконструкция (часть II. Армянский подвижный календарь и 532-летний цикл).....379

Гор Галстян

Толкование армянского
 календаря Ованнеса Саркавага.....425

ПУБЛИКАЦИИ**Ани Аракелян**

Иерей Акоб Амасийский (Эмасийский),
 неизвестный армянский поэт Позднего Средневековья.....445

Татевик Манукян

Тер Хачатур Куртканци и его грамматика.....476

Вано Егиазарян, Ани Ж. Аветисян

Неизданное двуязычное стихотворение
 Ованнеса Тлкуранци.....504

СООБЩЕНИЕ**Лусине Саргсян**

Изучение армянского рукописного искусства в цифровую эпоху.....509

Требования к оформлению статей в журнале *Вестник Матенадарана*.....525

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 33

BULLETIN OF MATENADARAN

Volume 33

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 33

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգաղյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ Թորոս Տարոնացի, Տիրամայրը մանկան հետ, Մատթեոսի
Ավետարանի անվանաթերթ, ՄՄ 6289, էջ 12ա
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 33,5

տպաքանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի թվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/